ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

20 մարտի 2026թ. **N 31-Ա**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ «ԱԿԱՆԱՏԵՍ» ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՆՎԱՆ ՆԵՐՔՈ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ականատես» դիտորդական առաքելություն անվան ներքո համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպու-թյունների («Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպություն և Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ) Կենտրոնական ընտրական հանձնաժողովում 16.03. 2026թ. ստացված դիմումը (կից փաստաթղթերով)՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով դիտորդներ հավատարմագրելու վերաբերյալ, և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 21-ի N 3-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. ««Ականատես» դիտորդական առաքելություն անվան ներքո համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների 16.03. 2026թ. դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով դիտորդներ հավատարմագրելու վերաբերյալ, բավարարել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

2026 թվականի մարտի 20
ք. Երևան